ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՇՀԱՊՁԲ-6/6-1»

ք. Երևան «24» «հոկտեմբերի» 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի Պ.Կ Վ. Հովհաննիսյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Վտանգավոր բարձրություն» ՍՊԸ-ն՝ի դեմս ընկերության տնօրեն Ս. Դանիելյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/ սույն պայմանագրով նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարել Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնել Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնել Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնել վճարված գումարը և վճարել Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե քազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետնախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետկապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրամասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 1,725,000 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 10-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (*Հավելված N 4*) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (*Հավելված N 4.1*):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծ: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի Կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի Կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանումն է հանդիսանում ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Վտանգավոր բարձրություն» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Բաղյան ½, բն. 31
ՀՀ ՏՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ Կորյունի մ/հ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 205042221528
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 01843418
ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի տեսուչ	տնօրեն
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-6/6-1 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Անվանում	Տեխնիկական ցուցանիշներ
1	Ալպինիստական պարան (10-12մմ)	Բնութագրվում է թեթև քաշով՝ 10 մետրի քարշը 1կգ-ից ոչ ավել: Պատրաստված է 48 ոլորած թելերի միջուկով: Նախատեսված է ալպինիզմի, ժայռամագլցման և փրկարարական աշխատանքների համար: Դիմացկուն է մինչև 2,5տ. ծանրության: Յուրաքանչյուր կտորը 200 մետրից ոչ պակաս, գործարանային փաթեթավորմամբ:
2	Վերելքի հարմարանք /Жумар/	Նախատեսված է պարանով վերելք կատարելու, ինքնապահովման և բեռներ ֆիքսելու համար: Ատամնավոր բռնակը պողպատից է, ունի կտրվածք աղբը կամ սառույցը հեռացնելու համար: Սողնակը թույլ է տալիս մեկ ձեռքով հանգիստ բացել և փակել այն: Բռնակը պաշտպանված է էլաստիկ պլաստիկից շերտով: Աջ ձեռքի համար նախատեսված անցքը ձեռնոցներով օգտագործելու հնարավորությամբ: Քաշը՝250 գրամ: Օգտագործվող պարանի տրամաչափը՝ 8-12 մմ: Փաթեթավորումը՝ գործարանային:
3	Օղակաձև ժապավեն (150 սմ)	Ամուր և դիմացկուն են մաշվածության բնական գործոնների հանդեպ: Ժապավենը նախատեսված է ժումարի հետ օգտագործելու նպատակով: Քաշը՝ 162 գրամ, բաղադրությունը՝ ЛКТ-27, երկարությունը՝ 150 սմ, լայնությունը՝ 27 մմ:
4	Սաղավարտ մասնագիտական (ալպինիստական)	Սաղավարտը ունի կարգավորման լայն դիապազոն (փոքրանալու և մեծանալու հնարավորություն), նաև հագած վիճակում: Արտաքին շերտի ամրությունը քարերից պաշտպանելու հնարավորությամբ: Սուր ծայրերից չվնասվելու համար սաղավարտը ունի փրփրանյութից հատուկ ներդիր, ինչը հարմարավետություն է ապահովում սաղավարտը երկար կրելու ժամանակ: Օդափոխության անցքերի առկայություն (քանակը էական չէ): Սաղավարտի վրա չորս կետերի առկայություն, որոնք նախատեսված են ճակատային լապտերը (8x3սմ չափի) տեղադրելու համար: Քաշը՝ 310 գրամ, փաթեթավորումը գործարանային:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Վտանգավոր բարձրություն» ՍՊԸ
տնօրեն

Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-6/6-1 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑԱ

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գին/դրամ/	Ընդհանուր գումար/դրամ/	2016թ.4-եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.2016թ.
1	Ալ պինիստական պարան (10-12մմ)	մետր	1,000	1,100	1,100,000	1000
2	Վերելքի հարմարանք /Жумар/	հատ	4	18,000	72,000	4
3	Օղակաձև ժապավեն (150 սմ)	հատ	4	7,000	28,000	4
4	Սաղավարտ մասնագիտական (ալ պինիստական)	հատ	15	35,000	525,000	15
	Ընդամենը				1,725,000	

Ծանոթություն.
Վարանքները պետք է մատակարարվեն ք. Երևան, Հալաբյան 44 Մ. Մելքոնյանի անվան ՌՄՎ:

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-6/6-1 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑԱ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գումար /դրամ/	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ., այդ թվում՝		
				Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1.	Ալ պինիստական պարան (10-12մմ) /պարաններ/	39541110/1/4/9	1,100,000	1,100,000	1,100,000	1,100,000
2.	Վերելքի հարմարանք /Жумар/ /պարանով մագլցելու սարքեր/	37531300/1/4/2	72,000	72,000	72,000	72,000
3.	Օղակաձև ժապավեն (150 սմ) /մեկուսիչ ժապավեն, օղակաձև/	31651100/1/4/2	28,000	28,000	28,000	28,000
4.	Սաղավարտ մասնագիտական (ալ պինիստական)/սաղավարտներ/	18441210/1/4/2	525,000	525,000	525,000	525,000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Վտանգավոր բարձրություն» ՍՊԸ
տնօրեն

Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀԱՊՁԲ-6/6-1պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս
_____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունը այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ՇՀԱՊՁԲ-6/6-1 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի պայմանները Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ——————————————ի (այսուհետ՝ Գնորդ)
(Գնորդի անունը)
——————————————ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ———————ին կնքված N ——————
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ——————— -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն